ՀՀ ԳԱԱ Մ. ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ 2020 Թ. ԳԻՏԱԿԱՆ և ԳԻՏԱԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Զեկուցող՝ ՀՀ ԳԱԱ ՏԻ տնօրեն,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տ.գ.դ., պրոֆեսոր
Վլադիմիր Հարությունյան

Հաշվետու ժողովի հարգելի՛ մասնակիցներ:

2020 թ. բավական ծանր ու անկանխատեսելի իրադարձություններով լի տարի էր ոչ միայն պետության, այլև ինստիտուտի համար: Մի կողմից կորոնավիրուսը և մյուս կողմից պատերազմը, որոնց պայմաններում ինստիտուտի գիտական անձնակազմը աշխատելով ուժերի գերլարման պայմաններում, կարողացավ արձանագրել գիտակազմակերպչական մի շարք նշանակալի հաջողություններ միջազգային հարթակներում, որոնց մասնավորապես, վերաբերում են.

Առաջին, ինստիտուտի կողմից ամեն տարի հրատարակվող «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» խորագրով հոդվածների ժողովածուի խմբագրական խորհրդի կազմը ընդլայնվեց՝ ներառելով նաև միջազգային փորձագետների՝ Սերգեյ Դոխոլյանին Ռուսաստանից և Վիկտոր Զախարյանին Ավստրիայից:

Երկրորդ, միջազգային համագործակցության տեսանկյունից մեկ այլ կարևոր ձեռքբերում էր նաև այն, որ ՌԴ ԳԱ Հասարակական գիտությունների գիտական տեղեկատվության ինստիտուտի հետ 12.02.2020թ. կնքվել է համագործակցության հուշագիր, որի շրջանակներում ինստիտուտի ավելի քան 10 գիտաշխատողներ մասնակցել են մի շարք միջազգային գիտաժողովների՝ անվճարության սկզբունքով հրատարակելով նաև գիտական հոդվածներ:

Երրորդ, մնջազգային համագործակցության ձեռքբերումներից է նաև այն, որ 2020թ. ինստիտուտի կողմից ամեն տարի հրատարակվող «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» հոդվածների ժողովածուում հոդվածներ են ներկայացրել տպագրության նաև օտարերկրյա քաղաքացիություն ունեցող մեր հայրենակիցներ Վիկտոր Զախարյանը՝ Ավստրիայից և Ռոբերտ Թումանյանը՝ Չինաստանից, ինչը վկայում է միջազգային հանրության կողմից ժողովածուի ընդունելի լինելու մասին:

Չորրորդ, միջազգային համագործակցության տեսանկյունից ինստիտուտի ամենանշանակալի ձեռքբերումն այն է, որ 2020թ. «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» հոդվածների ժողովածուն, որն ունի

բացառիկ յուրահատուկ թեմատիկ ուղղվածություն, այն է՝ ««Տնտեսական հրաշքներ». գործարկման ուղիները Հայաստանում» գիտական հոդվածների ժողովածուն ներկայացվեց SCOPUS միջազգային գիտական ինդեքսավորման համակարգին՝ դրանում ներառվելու ակնկալությամբ: Եվ փառք Աստծո, մեր ակնկալիքներն արդարացան և այսօր արդեն ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կողմից հրատարակվող «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» գիտական հոդվածների ժողովածուն Հայաստանում միակ տնտեսագիտական հանդեսն է որ համապատասխանում է SCOPUS միջազգային գիտական ինդեքսավորման չափանիշներին և ընդգրկված է այդ ցանկում: Դեռ ավելի, SCOPUS-ի թիմի կողմից հետաքրքրություն է առաջացել մասնակցելու 2021թ. վերոգրյալ թեմայով ինստիտուտի կողմից պլանավորվող գիտաժողովին: Սա բացառիկ երևույթ է Հայաստանի տնտեսագիտության պատմության ողջ ընթացքում:

Հայաստանի գիտական ոլորտի պատկերն առավել հստակ հնարավոր է ներկայացնել համեմատական վերլուծության արդյունքում: Վերլուծելով ՀՀ գիտական արդյունավետությունն ըստ ոլորտների, կարող ենք փաստել, որ Հիրշի ինդեքսի ամենաբարձր ցուցանիշներ արձանագրվել է ատոմային ֆիզիկայի ոլորտում (30-րդ տեղ): Այս ցուցանիշով Հայաստանն առաջինն է բոլոր 4 հարևանների շարքում:

Հայաստանի գիտակրթական կազմակերպություններից Սկոպուսում գրանցված են միայն 4-ը՝ Ալիխանյանի անվան ազգային լաբորատորիան, ՀՀ ԳԱԱ-ն, ԵՊՀ–ն և ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտը: Ի դեպ, իմ համեստ գնահատումներով, գիտական բարձր արդյունքների ստացումը պետք չէ կապել մեծ գումարների ստացման հետ: Դրա վառ ապացույց են հանդիսանում SCOPUS-ի ցանկում հայաստանյան 4 կազմակերպությունների՝ Ալիխանյանի անվան ազգային լաբորատորիան, ՀՀ ԳԱԱ-ն, ԵՊՀ-ը, ՀՀ ԳԱԱ-ի տնտեսագիտության ինստիտուտը, որոնք բոլորն էլ ՀՀ պետական բյուջեից քիչ գումարներ են ստանում: Բացի դրանից, երբ վերլուծում ենք գիտական արդյունավետությունն ըստ ոլորտների, ապա տեսնում ենք, որ Հիրշի ինդեքսի ամենաբարձր ցուցանիշն ատոմային ֆիզիկայի ոլորտում տարածաշրջանում ունի Հայաստանը, որտեղ գիտությանը հատկացվում է ՀՆԱ-ի ընդամենը 0.2 տոկոսը, իսկ օրինակ Թուրքիայում՝ ՀՆԱ-ի 2%-ը: Սա ևս մեկ ապացույց է այն բանի, որ փողն ու գիտական արդյունքն ուղիղ համեմատական կապի մեջ չեն գտնվում: Ավարտելով խոսքս կարող եմ արձանագրել, որ ոչ թե փողն է գիտական արդյունք տվողը, այլ խելքն ու աշխատասիրությունը: Եվ եթե խելքը Աստծո օրհնանքն է, ապա աշխատասիրությունը մարդու նպատակասլաց գործունեության և ձգտման արդյունքն է: Ուստի ես կոչ եմ անում տնտեսագիտության ինստիտուտի (ՏԻ) գիտաշխա-

տողներին աշխատել նպատակասլաց և ձգտել արդյունքի հասնել, իսկ փողը կլինի դրանց հետևանքը և համոզված եղեք, որ այն անպայման կլինի:

Տնտեսագիտության ինստիտուտը ձեռքբերումներ և հաջողություններ է ունեցել նաև ներպետական և հանրապետական մակարդակով, որոնց, մասնավորապես, վերաբերում են.

Առաջին: ՀՀ պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում և թեմաներում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողներին հավելավճարի տրամադրման հայտերի ընտրության մրցույթում ինստիտուտի տնօրեն Վլադիմիր Հարությունյանը հաղթող է ճանաչվել 4 անգամ անընդմեջ, այն է՝ 2014 թ., 2016 թ., 2018 թ. և նաև հաշվետու տարում, որը նույնպես բացառիկ երևույթ է Հայաստանի տնտեսագիտության պատմության ողջ ընթացքում:

Երկրորդ, հաշվետու տարում ինստիտուտը հրատարակել է եզակի խորագրով՝ ««Տնտեսական հրաշքներ». գործարկման ուղիները Հայաստանում» գիտական հոդվածների ժողովածու, որում.

1) Ամփոփված են 20-րդ դարում «տնտեսական հրաշքներ» իրականացրած եվրոպական, ասիական, խաղաղօվկիանոսյան և այլ տարածաշրջանների ավելի քան երկու տասնյակ պետությունների առաջավոր փորձը, որն ընթերցողին հնարավորություն է տալիս առանց տարբեր՝ էլեկտրոնային կամ տպագիր աղբյուրների դիմելու, տեղեկություն ստանալ վերջին 70 տարիներին տարբեր երկրներում իրականացված և այդ երկրների տնտեսական կյանքի վրա էական ազդեցություն թողած արմատական բարեփոխումների պատճառների, ընթացքի և արդյունքների մասին: Դրանցում կիրառված հիմնուղիներն ու գործիքակազմերն օգտակար և ուսանելի կարող են լինել նաև Հայաստանի գործադիր և օրենսդիր իշխանություններին՝ իրենց ծանր, ստեղծագործ, հեղափոխական փոփոխություններին միտված գործունեության մեջ:

2) Այդ հետազոտությունների արդյունքում արվել են կիրառական առաջարկություններ, որոնք հնարավոր գործնական կիրառում կարող են ունենալ ՀՀ տնտեսության տարբեր ոլորտներում:

3) Դրանք ժողովածուում ներկայացված են գիտահանրամատչելի լեզվով՝ հասկանալի ոչ միայն տնտեսական քաղաքականություն իրականացնող պատասխանատուների, այլև շարքային քաղաքացիների համար:

Ավելի քան երկու տասնյակ պետությունների առաջավոր փորձի ուսումնասիրությունից հետո, եկել ենք այն եզրահանգման, որ դրանցում կիրառված հիմնուղիներից ու գործիքակազմերից Հայաստանում գործարկելի ու արդյունքաստեղծ են հետևյալները.

1) հակակոռուպցիոն լայնածավալ ու արդյունավետ գործողությունների կազմակերպումը, ինչպես կատարվել է Սինգապուրում,

2) ճապոնական մենեջմենթի և որոշումների կայացման գործընթացի համաձայնեցման սկզբունքի ներդրումը,

3) բնակչության խնայողությունների ուղղորդումը դեպի կապիտալի շուկաներ, ինչպես կատարվել է Ճապոնիայում ու Չիլիում,

4) չմշակված հանքաքարի արտահանման արգելումը, ինչպես կատարվել է Ինդոնեզիայում,

5) բնական ռեսուրսները սահմանադրորեն ընդմիշտ ժողովրդին ընդհանուր սեփականության իրավունքով ամրագրելը, ինչպես կատարվել է Իսլանդիայում,

6) հատուկ ուշադրություն պետք է դարձնել հայրենասիրության, միասնականության և թիմային ոգու բարձրացմանը,

7) անհրաժեշտ է խրախուսել թվայնացած տնտեսության զարգացումը և ուսումը:

Ստեղծված հետպատերազմյան իրավիճակում և համավարակային շրջանում Հայաստանում անհրաժեշտ է իրականացնել ոչ թե տնտեսական հեղափոխություն, այլ «տնտեսական հրաշք», որի հնարավորությունն ունի հայ ժողովուրդը, քանի որ հայկական խմբայնությունն այն մոբիլիզացնող ուժն է, որը հայերին օգնեց և հաղթանակի հասցրեց ինչպես 2016 թ. ապրիլյան և 2020 թ. հուլիսյան պատերազմների, այնպես էլ 2018 թ. ապրիլյան ոչ բռնի, թավշյա հեղափոխության ժամանակ: Կարծում եմ, «տնտեսական հրաշք» տեղի կունենա Հայաստանում և Հայաստանը 3-4 տարի հետո կարձանագրի իրականություն դարձած «տնտեսական հրաշքի» պտուղները: Ընդ որում «հայկական հրաշքը» պետք է կառուցվի՝ հաշվի առնելով մեր երկրի առավելությունները և թերությունները, քանի որ յուրաքանչյուր երկիր իր առանձնահատկություններն ունի, և միշտ չէ, որ այլ երկրների ձեռնարկած միջոցառումները որևէ երկրում ճշգրտորեն կրկնելը հնարավոր է, կամ այն նույնքան արդյունավետ կլինի: Բայց արտերկրյա առաջավոր փորձի օգտագործումը, անկասկած, տնտեսության մեջ դրական տեղաշարժեր արձանագրելու առումով շատ արդյունավետ կարող է լինել, միաժամանակ կարող են բացահայտվել մինչ այդ չերևացող բազմաթիվ խնդիրներ ու ծուղակներ:

Երրորդ, պատերազմում ունեցած պարտությունը և հատկապես, կապիտուլացիան, երբեք էլ չպետք է համարել դատավճիռ: Հիշենք, նման իրավիճակում հայտնված Գերմանիային և Ճապոնիային, որոնք 2-րդ աշխարհամարտի ընթացքում կապիտուլացիայի ենթարկվեցին, բայց հետագայում նրանց տնտեսություններում «տնտեսական հրաշք» տեղի

ունեցավ՝ օրինակ հանդիսանալով աշխարհի շատ երկրների համար: Դրանց շարքին կարելի է դասել նաև Հարավային Կորեան: Այնպես, որ ամեն ինչ չէ, որ կորած է:

Հարգելի գործընկերներ:

Հանրապետության արդի կացությունը ենթադրում է նոր մոտեցումներ՝ հատկապես տնտեսության ոլորտում: Հետևաբար տնտեսագիտության ինստիտուտի կոլեկտիվը պետք է շարունակի իր ակտիվ նախաձեռնական մոտեցումները հետազոտական նոր մշակումներին՝ ի նպաստ ազգային տնտեսության բարգավաճման, որին կարող է նպաստել կոլեկտիվի երիտասարդացման գործընթացը, որն առողջ մրցակցութուն կստեղծի կոլեկտիվում:

Չորրորդ, ինստիտուտը հաշվետու տարում հիշատակության արժանի նաև այլ աշխատանքներ է կատարել, որոնց, մասնավորապես վերաբերում են.

4.1. հանրապետության կառավարությանը տարբեր ոլորտների վերաբերյալ կիրառական առաջարկությունների ներկայացումը: Մոտեցում, որը կշարունակվի նաև հետագա տարիներին: Այսպիսի մոտեցումը եզակիներից մեկն է հանրապետությունում:

4.2. Ստեղծված պատերազմական իրավիճակում ինստիտուտի աշխատակիցներն ամենաքիչը, որ կարող էին անել Արցախի համար դա «Մենք ենք մեր սահմանները» հաշվին գումարի փոխանցումն է: Այդ հմատեքստում ինստիտուտի աշխատակիցներն իրենց անձնական միջոցներից հավաքագրել և հոկտեմբեր ամսին «Մենք ենք մեր սահմանները» հաշվին են փոխանցել 500 հազար ՀՀ դրամ, իսկ նոյեմբեր ամսին 998 000 ՀՀ դրամ: Բացի դրանից ինստիտուտի տնտեսված միջոցներից 5.6 մլն դրամ ետ է վերադարձվել ՀՀ պետական բյուջե և «Մենք ենք մեր սահմանները» հաշվին է փոխանցվել նաև ինստիտուտի աշխատակիցների սոցիալական փաթեթի մնացորդ ամբողջ գումարը, որը բացարձակ մեծությամբ կազմել է 1 մլն 872 000 ՀՀ դրամ: Ընդհանուր առմամբ ինստիտուտի կոլեկտիվը հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին «Մենք ենք մեր սահմանները» հաշվին փոխանցել է 3 մլն. 284 000 ՀՀ դրամ:

4.3. Շենքի նկուղային հարկում ապաստարանի կառուցումը, որը լավագույններից մեկն է ՀՀ ԳԱԱ համակարգում:

4.4. Գիտական բազային հետազոտական թեմաների ընտրությունը կատարելիս հիմք է ընդունել կառավարության գործունեության ծրագրի ելակետային դրույթները, որն առավել արդիական է դարձնում հետազոտվող թեմաները ու ստացված արդյունքները: Այս մոտեցումը եզակիներից մեկն է հանրապետությունում

Հաշվետու տարում բազային հետազոտվող թեմաներն են եղել.

1.Հարկեր/ՀՆԱ ցուցանիշի շարունակական աճի ապահովման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի հանրապետությունում (թեմայի գիտական ղեկավար տ.գ.դ, պրոֆ. Վլադիմիր Հարությունյան)

2.Արտահանումը որպես ՀՀ տնտեսական աճի հենասյուն (թեմայի գիտական ղեկավար, տ.գ.թ., Լիլիթ Սարգսյան)

3.Տնտեսական քաղաքականության և քաղաքացու բարեկեցության փոխազդեցության հիմնախնդիրները ՀՀ-ում (թեմայի գիտական ղեկավար տ.գ.թ., դոցենտ Քրիստինե Բաղդասարյան)

4.Բարձր տեխնոլոգիական տնտեսության ձևավորման և զարգացման հեռանկարները ՀՀ-ում (թեմայի գիտական ղեկավար տ.գ.թ. Սվետլանա Դալլաքյան)

5.Նորարարական զարգացման հիմնախնդիրները ՀՀ գյուղատնտեսության ոլորտում (թեմայի գիտական ղեկավար տ.գ.թ., դոցենտ Մերի Մանուչարյան)

6.Թվային տնտեսությունը՝ որպես ՀՀ զարգացման նոր հարացույց, մարտահրավերներ, հնարավորություններ և հեռանկարներ (թեմայի գիտական ղեկավար տ.գ.թ. Գևորգ Հարությունյան)

7.Ուրվագծեր հայ տնաեսագիտական մտքի պատմության (թեմայի գիտական ղեկավար տ.գ.դ., պրոֆ. Ռոբերտ Սարինյան)

Հետազոտված թեմաներում ստացված գիտական արդյունքների մասին համառոտ կզեկուցեն թեմաների ղեկավարներ՝ Լիլիթ Սարգսյանը, Քրիստինե Բաղդասարյանը, Սվետլանա Դալլաքյանը և Մերի Մանուչարյանը: Ես ամփոփ միայն նշեմ, որ հաշվետու տարում ինստիտուտի գիտաշխատողները հրատարակել են.

- 5 գիրք
- 41 տեղական հոդված
- 134 արտասահմանյան հոդված
- Մեկ հատ գիտական հոդվածների ժողովածու, որը ներառվել է սկոպուսի ցանկում և ինստիտուտն առավել ճանաչելի է դարձել միջազգային հարթակներում, երևույթ, որն աննախադեպ է Հայաստանի տնտեսագիտության ողջ պատմության ընթացքում:

4.5. Ինստիտուտի գիտական հրապարակումները հանրայնացվել և հրապարակայնացվել են մամուլում, հրատարակված աշխատանքները համապատասխան մարմիններին փոխանցվել են փոստային առաքմամբ, որը նոր մշակույթ է հայաստանյան իրականությունում և բարձրացրել են ինստիտուտի ճանաչվելիությունը:

4.6. Հաշվետու տարում ձեռքբերումներից է նաև նորացված էլեկտրոնային կայքը, որը լավագույններից մեկն է ՀՀ ԳԱԱ համակարգում:

Հինգերորդ, ինստիտուտում ստեղծված են բոլոր պայմանները անխափան և արդյունավետ աշխատանքի համար: Ինստիտուտում տիրում է առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ, որը նպաստում է առավել արդյունավետ աշխատանքին: Նշենք, որ անվտան-

գության նկատառումներից ելնելով՝ ինստիտուտում տեղադրվել է նաև տեսահսկման համակարգ՝ 24-ժամյա տեսագրման ռեժիմով (ի դեպ այն իրականացվել է ինստիտուտի աշխատակիցների ջանքերով, այսինքն՝ առանց գումարի)։ Այսպիսի աշխատանքային պայմաններ ակադեմիական եզակի ինստիտուտներ կարող են ունենալ։

Շնորհակալություն եմ հայտնում տնտեսագիտության ինստիտուտի բոլոր աշխատակիցներին՝ անկախ զբաղեցրած պաշտոններից, որտեղ գործում է «Մեկը բոլորի, բոլորը մեկի համար» հայտնի սկզբունքը։ Եվ պատահական չէ, որ տնտեսագիտության ինստիտուտը կենսագրություն է կերտում և գալիք սերունդներին թողնելու բան ունի, որը պարզ ու հստակ կդառնա ս/թ վերջում հրատարակվելիք «ՀՀ ԳԱԱ Մ.Քոթյանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի 2006-2020թթ. գիտական և գիտակազմակերպչական գործունեության արդյունքների մասին» 480 էջանոց հաշվետվությունից, ինչը համընկնում է Վլադիմիր Հարությունյանի տնօրեն աշխատելու տարիների հետ։

Գալիք 2021 թվականին ծրագրել ենք իրականացնել հետևյալները

1) շարունակել խորացնել ինստիտուտի կանոնադրությամբ հաստատված ուղղություններով իրականացվող աշխատանքները,

2) ակտիվացնել աշխատանքներն ինստիտուտի աշխատողներին դրամաշնորհային և առաջին հերթին արտասահմանյան ծրագրերում ընդգրկվածության ուղղությամբ։

3) շարունակել միջազգային համագործակցությունը՝ պահպանելով արդեն ձեռք բերված հաջողություններն ու արձանագրելով նորերը,

4) շարունակել ինստիտուտի ձեռքբերումներն ու հաջողությունները ներպետական ու հանրապետական մակարդակով,

5) ինստիտուտի կոլեկտիվը դարձնել ինստիտուտի նվիրյալների ու երկրի հայրենասերների մի կուռ ամբողջություն՝ անկախ տարիքից ու ունեցած գիտական աստիճանից։ Այլևս կոլեկտիվի շվաքի տակ յոլա գնացող գիտաշխատողներ չպետք է լինեն, այլ պետք է լինեն կառավարությանը գործնական ու արդյունավետ կիրառական առաջարկություններ ներկայացնող գիտաշխատողներ։

Այսքանը, շնորհակալություն ուշադրության համար։
Եթե հարցեր կլինեն պատրաստ եմ պատասխանել։